Խրոնիկա

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱԿՏԻՎԻ ԺՈՂՈՎԸ

Ռեսպուբլիկայի արդյունաբերության և ժողովրդական տնտեսության աշխատողների բազմահազար բանակի կյանքում նշանակալից իրադարձություն էր Հայկական ՍՍՌ Ժողովրդական տնտեսության խորհրդի ակտիվի ժողովը, որ տեղի ունեցավ հոպիս ամսին։

Ակտիվի ժողովում հաշվետու զեկուցումով հանդես եկավ Հայկական տնտեսական վարչական շրջանի Ժողտնտխորհի նախագահ ընկ. Ս. Մովսիսյանը։ Ժողովի մասնակիցներին նա պատմեց ռեսպուբլիկայի արդյունաբերության առաջին կիսամյակի արտադրական պլանի կատարման արդյունքների և 1958 թվականի ժողովրդական տնտեսության պլանի ժամկետից շուտ կատարման միջոցառումների մասին։

— Արդյունաբերության աշխատանքի առաջին տարվա արդյունքները նոր պայմաններում,— ասաց զեկուցողը,— փայլուն կերպով հաստատեցին պարտիայի քաղաքականության ճշտությունը։ Այդ երևում է մեր ռեսպուբլիկայի արդյունաբերության աշխատանքի օրինակից։ Հաջողությամբ կատարելով 1957 թվականի առաջադրանքը, ռեսպուբլիկան ընթացիկ տարվա առաջին կիսամյակում ձեռք բերեց մի շարք հաջողություններ։ Այդ ժամանակաշրջանում արտադրության պլանը համախառն արտադրանքի գծով կատարվել է 105,%-ով։ Առանձնապես կարևոր է, որ ամման տեմպերի առջևից գնում են արդյունաբերության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են մեքենաշինությունը, հաստոցաշինությունը, սարքաշինությունը, քիմիական և շինանյութերի արդյունաբերությունները։ Բարձր տեմպերով են զարգանում նաև գունավոր մետալուրգիան, էլեկտրատեխնիկական և թեթև արդյունաբերությունները։

Ուրախալի է նաև այն, որ ետ մնացող ձեռնարկությունների քանակը զգալիորեն նվազել է և ներկայումս կազմում է Ժողտնտխորհի ձեռնարկությունների ընհանուր թվի ընդամենը 12,5%-ը, անցյալ տարվա առաջին կիսամյակի 25%-ի դիմաց։

Ռեսպուբլիկայի Ժողտնտխորհի արդյունաբերական ձեռնարկությունները այդ ժամանակում հաջողությամբ յուրացրել են փորձնական նմուշների թողարկումը և արտադրանքի 74 տեսակների սերիական արտադրությունը։ Ռեսպուբլիկայի արդյունաբերության բոլոր ճյուղերը գերակատարել են նաև աշխատանքի արտադրողականության բարձրացման պլանը։ Նախնական տվյալներով այժմ իսկ կարելի է համարձակորեն ասել, որ կապահովվի նաև արտադրանքի ինքնարժեքի իջեցման առաջադրանքը։

Արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցումը նախադրյալներ է ստեղծել Հայկական ՍՍՌ-ի համար՝ ավելի լիակատար և լայնորեն մասնակցելու Սովետական Միության արտաքին կապերին։ Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում ռեսպուբլիկայի արդյունաբերական արտադրանքի արտահանումը կազմեց մոտ 40 մլն. ռուբլի, որը զգալիորեն գերազանցում է 1957 թվականի նույն ժամանակամիջոցում կատարված արտահանության ծավալից։

Ժողովին պատմելով ձեռք բերված հաջողությունների մասին, ընկ. Մովսիսյանը խիստ քննադատության ենթարկեց այն թերությունները, որոնք դեռևս գոյություն ունեն առանձին ձեռ-

նարկությունների և ժողտնտխորհի աշխատանքում՝ ամբողջությամբ առնված։

Այսպես, ժողտնտխորհի 27 ձեռնարկություն չեն կատարել իրենց արտադրական պլանները։ Դրանց թվումն են՝ Սննդի արդյունաբերության վարչության 9 ձեռնարկություն, էլեկտրատեխնիկական արդյունաբերության ու սարքաշինության վարչության 5 ձեռնարկություն և էներգետիկ վարչության 5 ձեռնարկությունից՝ 4-ը։ 25 ձեռնարկություն չեն ապահովել աշխատանքի արտադրողականության վերաբերյալ սահմանված առաջադրանքը և 41 ձեռնարկություն թույլ են տվել միջին աշխատավարձի աճման տեմպերի առաջացում՝ աշխատանքի արտադրողականության աճման համեմատությամբ։ Առանձնապես վատ են գործերը թեթև արդյունաբերության ձեռնարկություններում, որտեղ աշխատավարձի գերածախսի ընդհանուր գումարը կազմում է 2213 հազ. ռուբլի։

Վատ է նաև սահմանված նոմենկլատուրայով արտադրանքի թողարկման գործը, որն անդրադառնում է ինչպես ռեսպուբլիկայի ձեռնարկությունների, այնպես էլ երկրի մյուս տնտեսական շրջանների համար անհրաժեշտ կոոպերացված մատակարարումների պլանի կատարման վրա։

Զեկուցողը մանրամասն կանգ առավ արտադրանքի որակի բարձրացման բնագավառում գոյություն ունեցող խոշոր թերությունների վրա։ Այսպես, ժողտնտխորհի ձեռնարկություններում միայն բացարձակ խոտանի կորուստները կազմել են 2,4 մլն. ռուբլի։

Ժողտնտխորհի նիստերում բազմիցս են քննարկվել այն հարցերը, որոնք վերաբերում են Երևանի կամվոլնի (նուրբ բրդեղենի) կոմբինատի, հրուշակեղեն-մակարոնի ֆաբրիկայի, ավտոդեղերի, հախճապակու և Լենինականի հեծանիվի գործարանների ու այլ ձեռնարկությունների արտադրանքի որակին։ Քննարկումները ցույց են տվել, որ որոշ վարչությունների և ձեռնարկությունների ղեկավարներ հարկ եղած չափով չեն հոգում թողարկված արտադրանքի որակի մասին։ Ժողտնտխորհը աշխատանքից ազատեց Լենինականի հեծանիվի գործարանի ու Երևանի կամվոլնի կոմբինատի դիրեկտորներին և կոնկրետ միջոցառումներ նշեց այդ տեղերում արտադրանքի որակը բարելավելու համար։

Գոյություն ունի այն սխալ կարծիքը, թե թողարկված արտադրանքի որակը անմիջականորեն կախված է վերահսկիչների քանակից։ Նման կարծիքը հերքվում է թեկուզ հենց հետևյալ օրինակով. այն ժամանակ, երբ արտադրանքի որակը Լենինականի հեծանիվի գործարանում գտնվում էր ամենացածր մակարդակի վրա, այնտեղ հաստիքով աշխատում էին 41 վերահսկիչ, իսկ երբ վերահսկիչների թիվը կրճատեցին 15 միավորով, դրությունը ոչ միայն չվատթարացավ, այլ, ընդհակառակը, բարելավվեց։

Պետք է լրջորեն մտածել Լենինականի գործարանի օրինակի մասին և ստիպողաբար հրաժարվել հատուկ վերահսկիչների հաստիքից՝ նրանց ֆունկցիաները դնելով արտադրական ցիկլի յուրաքանչյուր հաջորդ օղակի վրա։

Ժողտնտխորհի մի շարք ձեռնարկություններում նկատվում է խիստ անցանկալի երևույթ, որը կարող է վատ հետևանքներ առաջ բերել։ Բանն այն է, որ այդ ձեռնարկությունների ղեկավարները հրաժարվել են լայն սպառման այնպիսի արտադրանք թողարկելուց, որը մեծ չափով պահանջում են մեր սպառողները։ Այսպես, օրինակ, Երևանի դպրոցական պիտույքների ֆաբրիկան դադարել է քանոններ, եռանկյունիներ, աշակերտական նստարաններ արտադրելուց, ռետինատեխնիկական շինվածքների գործարանը դադարել է մանկական ռետինե խաղալիքներ արտադրելուց, թեև այդ նպատակով այդտեղ ժամանակին հատուկ ցեխ է կառուցվել։ Մեքենաշինության և հատուցաշինության վարչության կոլեկտիվը չի մտածում այն մասին, որպեսզի իր ձեռնարկություններում կանոնավորի տնային գործածության այնպիսի անհրաժեշտ առարկաների արտադրությունը, ինչպիսիք են՝ մսաղացները, թավաները և շատ այլ առարկաներ։ Ժողտնտխորհի վարչությունների պետերը և ձեռնարկությունների դիրեկտորները պետք է անհապաղ վերականգնեն արտադրությունից հանված լայն սպառման արտադրանքները և ընդարձակեն նրանց արտադրանքը։

Արդյունաբերության կառավարման նոր ձևերին անցնելը բացառիկ բարենպաստ պայմաններ է ստեղծել ձեռնարկությունների միջև մասնագիտացման և կոոպերացման համար։ Օգտագործելով այդ առավելությունները, ժողտնտխորհը ան-

ցած տարում մասնագիտացրել է 13 գործարան և ցեխեր։

Կենսագործված միջոցառումների շնորհիվ, ընթացիկ տարում դադարեցվեց երկրի հեռավոր շրջաններից այն էլեկտրաշարժիչների, կաբելային և պլաստմասսային շինվածքների, էլեկտրակոթառների, զանազան չափիչ և վերահսկիչ գործիքների ներմուծումը, որոնք անհրաժեշտ են ռեսպուբլիկայում թողարկվող արտադրանքի կոմպլեկտավորման համար։ Հետագայում այդ աշխատանքը պետք է անցկացնել՝ հաշվի առնելով ոչ միայն մեր, այլ նաև մյուս, մասնավորապես, վրացական և ադրբեջանական տնտեսական շրջանների կոոպերացումը և կարիքների բավարարումը։

— Օգտվելով այն հանգամանքից, որ ակտիվին ներկա են մեր թանկագին հյուրերը,— ասում է զեկուցողը,— Վրացական ՍՍՌ Ժողտնտխորհի նախագահ ընկ. Գ. Զոդովաձեն և Ադրբեջանական ՍՍՌ Ժողտնտխորհի նախագահ ընկ. Ս. Օրուջևը, մենք առաջարկում ենք, որպեսզի Անդրկովկասի երեք ժողտնտխորհների միջև, մեր ռեսպուբլիկաների պետպլանների մասնակցությամբ, սերտ կապ հաստատվի արդյունաբերության զարգացման հարցերը համաձայնեցնելու և արտադրության մասնագիտացման ու երեք հարևան տնտեսական շրջանների միջև կոոպերացման խնդիրները ճիշտ լուծելու համար։

Ղեկավարության մերձեցումը տեղերին և գերատեսչական պատնեշների վերացումը,—շարունակում է զեկուցողը,— թույլ տվեցին լիովին հայտնաբերել և օգտագործել մեր ձեռնարկությունների ներքին ռեսուրսները, ամենից առաջ սարքավորումը և արտադրական շենքերը։ Ժողտնտխորհի մի տարվա աշխատանքի ընթացքում հայտնաբերվել և կարիք ունեցող ձեռնարկություններին են հանձնվել մոտ 300 չօգտագործված մեքենաներ ու սարքեր։ Սակայն մինչև 1958 թվականի հուլիսի 1-ը չտեղակայված սարքավորում գոյություն ունի դեռևս մի շարք ձեռնարկություններում (այդ թվում՝ ավելի քան 88 մլն. ռուբլի գումարով ներմուծված սարքավորում)։

Ռեսպուբլիկայի Ժողտնտխորհը քննության առավ այդ հարցը և որոշում ընդունեց, որի համաձայն նախատեսվում է արագացնել մի շարք օբյեկտների շինարարությունը, դրանք հագեցնել նոր տեխնիկայով, ինչպես նաև այն մեքենաներով ու հաստոցներով, որոնք մյուս ձեռնարկություններում չէին օգտագործվում։ Հայտնաբերված և ռեսպուբլիկայի համար ոչ պիտանի սարքավորումը նախատեսվում է հանձնել երկրի մյուս տնտեսական շրջաններին։

Պատշաճ բարձրության վրա չի գտնվում շինարարական աշխատանքների որակը։ Շինարարական տրեստների առանձին աշխատողներ թույլ են տալիս հավելագրումներ, իսկ Ժողտնտխորհի ձեռնարկությունների և ճյուղային վարչությունների ղեկավարները անկոնտրոլ կերպով ընդունում և վճարում են կապալային կազմակերպությունների ներկայացրած հաշիվները։ Կապիտալ շինարարության մեջ ստեղծված դրությունը պահանջում է դիմել եռանդուն միջոցառումների՝ կապիտալ աշխատանքների պլանի կատարումը արդյունաբերության բոլոր ճյուղերի գծով ապահովելու համար։

ՍՄԿՊ Կենտկոմի Մայիսյան պլենումի որոշումը համապատասխան, Ժողտնտխորհի ուշադրության կենտրոնում են գտնվում գործող ձեռնարկությունների ընդլայնման ու վերակառուցման և քիմիական արդյունաբերության մի շարք նոր ձեռնարկությունների շինարարության հարցերը։

Ժողտնտխորհների առջև դրված մեծ խնդիրները,— եզրափակում է իր խոսքը ընկ. Ս. Մովսիսյանը,— կարող են հաջողությամբ լուծվել պետական կարգապահության հետագա ամրապնդման, որակյալ բանվորների, վարպետների, ինժեներա-տեխնիկական աշխատողների և տնտեսական ղեկավարների կադրերը պլանաչափ նախապատրաստելու և աճեցնելու, Ժողտնտխորհի ապարատի աշխատանքը բարելավելու և կատարելագործելու, Վրաստանի, Ադրբեջանի և Տաջիկստանի եղբայրական ռեսպուբլիկաների ժողտնտխորհների աշխատողների հետ սոցիալիստական լայն մրցություն ծավալելու պայմանով։

Կասկածից դուրս է, որ Հայկական ՍՍՌ Ժողտնտխորհի ձեռնարկությունների և կազմակերպությունների աշխատողները գործի կդնեն բոլոր ջանքերը՝ պարտիայի և կառավարության կողմից տրված խնդիրները հաջողությամբ կատարելու համար և իրենց ավանդը կմտցնեն մեր Հայրենիքի էկոնոմիկայի զարգացման գործում։

Զեկուցումից հետո տեղի ունեցավ մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեցին 22 հոգի։ Ելույթ ունեցողները խոսեցին այն մասին, որ արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցումը մոտեցրել է ղեկավարությունը արտադրությանը, բարենպաստ կերպով է անդրադարձել ձեռնարկությունների աշխատանքի ռիթմի վրա, բարելավել նրանց նյութա-տեխնիկական մատակարարումը, օգնել մասնագիտացման իրագործմանը և նոր տեխնիկայի ամրապնդմանը։

Դրա հետ միասին ելույթ ունեցողները քննադատության ենթարկեցին համապատասխան կազմակերպություններին՝ ձեռնարկություններին հումքով, օժանդակ նյութերով և պահեստամասերով վատ մատակարարելու համար։ Նրանք նշեցին նույնպես, որ Հայկական ՍՍՌ Պետական գիտա-տեխնիկական կոմիտեն բավարար օգնություն ցույց չի տալիս արտադրությանը։ Իրենց ելույթներում նրանք պահանջեցին, որպեսզի անհապաղ լուծվի ձեռնարկություններին ջուր, էլեկտրաէներգիա և բանվորական ուժ մատակարարելու հարցը։ Դրա հետ միասին, մատնանշեցին նաև, որ որոշ ձեռնարկությունների ղեկավարներ քիչ ուշադրություն են դարձնում ֆինանսների և արտադրության էկոնոմիկայի հարցերի վրա։ Շոշափվեցին նաև կադրերի պատրաստման, արտադրանքի որակի բարձրացման, բնակարանային շինարարության տեմպերի արագացման անհրաժեշտության և այլ հարցեր։

Ջերմ ընդունելության արժանանալով ակտիվի ժողովի մասնակիցների կողմից, հանդես եկան Վրացական ՍՍՌ Ժողտնտխորհի նախագահ ընկ. Գ. Զոգովաձեն, Ադրբեջանական ՍՍՌ Ժողտնտխորհի նախագահ ընկ. Ս. Օրուջևը և Տաջիկական ՍՍՌ Ժողտնտխորհի Թեթև արդյունաբերության վարչության պետ ընկ. Ու. Կադիմովան։

Հանդիսականներին մեծ ճառով դիմեց ՀԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Ս. Թովմասյանը։ Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի անունից նա ողջունեց Ժողտնտխորհի արդյունաբերության աշխատողներին, որոնք արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցումից հետո պետական պլանները կատարելու գործում հասել են զգալի հաջողությունների։

Ակտիվի ժողովը մեծ խանդավառությամբ միահամուռ որոշում ընդունեց սոցիալիստական մրցության մեջ մտնել Վրացական, Ադրբեջանական և Տաջիկական տնտեսական վարչական շրջանների ձեռնարկությունների ու կազմակերպությունների կոլեկտիվների հետ և Հայկական տնտեսական վարչական շրջանի ձեռնարկությունների ու կազմակերպությունների բանվորների, ինժեներա-տեխնիկական աշխատողների և ծառայողների անունից ստանձնեց մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

1. Մինչև դեկտեմբերի 23-ը կատարել ժողտնտխորհի արդյունաբերության համախառն արտադրանքի 1958 թվականի պլանը և պլանից դուրս տալ 153 մլն. ռուբլու արտադրանք։

2. Ապահովել պլանից դուրս արտադրանքի հետևյալ կարևորագույն տեսակների թողարկումը.

Ռաֆինացված պղինձ	580	տոննա
Ծծմբական թթու	800	»
Սուպերֆոսֆատ	4000	»
Պղնձի կոնցենտրատ	4000	»
Մոլիբդենի կոնցենտրատ	120	»
Սեանիտ և նաֆրիտ	350	»
Ավտոդող	10000	կոմպլ.
Փոխադրովի էլեկտրական	200	հատ
Գեներատոր	135	»
Կենտրոնախույս պոմպ	1200	»
Ցեմենտ	3000	տոննա
Փափուկ կաշի	1800	հազ. քառ. դցմ
Կոշիկ	120	հազ. զույգ
Պահածո	5000	հազ. պայմ. տուփ

Սոցիալիստական պարտավորությունները նախատեսում են նաև ձեռնարկություններում աշխատանքի արտադրողականությունը պլանից դուրս բարձրացնել 2,2%-ով, տնտեսել 400 հազ. կվտժ էլեկտրաէներգիա և ապահովել առնվազն 11 մլն. ռուբլու գերպլանային շահույթ։

Տեխնոլոգիական պրոցեսների հետագա մեքենայացման, ավտոմատացման ու կատարելագործման, նոր տեխնիկայի արմատավորման նպատակով ռեսպուբլիկայի առաջատար արդյունաբերական օբյեկտներում պլանից դուրս իրագործել մի շարք կարևոր միջոցառումներ։

Ընդունվել է պարտավորություն՝ հասնելու թողարկվող արտադրանքի որակի արմատական բարելավման, սորտայնության բարձրացման, խոտանի և սխալ սորտավորման վերացման, ինչպես նաև արտադրության բոլոր ստադիաներում կորուստների խիստ կրճատման։

Ակտիվի ժողովը Հայաստանի արդյունաբերության բոլոր աշխատողներին կոչ արեց է՛լ ավելի լայնորեն ծավալել սոցիալիստական մրցությունը՝ 1958 թվականի համար ստանձնած պարտավորությունները հաջողությամբ կատարելու և գերակատարելու համար։

Ժողտնտխորհի և ենթակա կազմակերպությունների ապարատի աշխատանքի մասին արված քննադատական դիտողությունները ամփոփված են հատուկ նշանակված հանձնաժողովի կողմից և քննության են առնվել Ժողտնտխորհի նիստում։ Ժողտնտխորհը ընդունել է կոնկրետ միջոցառումներ, որոնք ուղղված են ինչպես Ժողտնտխորհի ապարատի առանձին օղակների, նույնպես և ռեսպուբլիկայի որոշ ձեռնարկությունների աշխատանքի թերությունների վերացմանը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂՏՆՏԽՈՐՀՈՒՄ

Հայկական ՍՍՌ Ժողովրդական տնտեսության խորհուրդը քննարկեց իր օբյեկտների շինարարությունում տիպային նախագծերի կիրառման հարցը։ Նշվեց, որ, չնայած հաստատված տիպային նախագծերի առկայությանը, նրանք շինարարության մեջ հաճախ չեն կիրառվում։ Այսպես, անցյալ տարի նախագծված 57 բնակելի տներից «Հայարդնախագիծ»-ը տիպային նախագծեր է կիրառել միայն չորս տների շինարարությունում։ Տիպային նախագծերը այնքան լայնորեն չեն կիրառվում նաև այս տարի, որի պատճառով բնակելի տարածության մեկ քառակուսի մետրի նախահաշվային արժեքը դեռևս շարունակվում է բարձր մնալ։

Շինարարության մեջ տիպային նախագծերի կիրառումը ընդլայնելու նպատակով Ժողտնտխորհը «Հայարդնախագիծ» և «Արմգիդրոցվետմետ» նախագծային ինստիտուտներին առաջարկեց կազմել բնակելի տների, կուլտուր-կենցաղային նշանակություն ունեցող օբյեկտների, ինչպես նաև այլ կառուցվածքների միայն տիպային նախագծերը և միջոցառումներ մշակեց ըստ հաստատված տիպային նախագծերի շինարարությունն ապահովելու համար։

***

Ժողտնտխորհի Փայտամշակման և անտառային արդյունաբերության վարչության ձեռնարկությունները ընթացիկ տարվա առաջին կիսամյակի ընթացքում ապահովեցին մանկական կահույքի արտադրության պլանի կատարումը։ Սակայն կահույքի այդ քանակը չի ապահովում աշխատավորների աճած պահանջմունքը։

Այդ նպատակով Ժողտնտխորհը որոշեց ավելացնել այդ ձեռնարկությունների արտադրությունը և մինչև տարվա վերջը պլանից դուրս պատրաստել մինչև 1200 հատ մանկական աթոռ, 800 հատ մանկական պահարան, 4500 հատ մանկական տեղան և այլն։

Միաժամանակ, Ժողտնտխորհը Փայտամշակման և անտառային արդյունաբերության վարչությանը պարտավորեցրեց միջոցառումներ մշակել մանկական կահույքի նոր տեսակների, այդ թվում ռետինե անիվներով մանկական մահճակալների, մանկապարտեզների ու մանկամսուրների համար փոքրիկ պահարանների արտադրությունը յուրացնելու նպատակով։

***

Քննարկելով Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի փարբիդի ցեխի անցած կիսամյակի գործունեությունը, Ժողտնտխորհը բացահայտեց տեխնոլոգիական ռեժիմի մեծ թվով խախտումներ, որոնք առաջ են բերել վալցիումի կարբիդի որակի, իսկ առանձին ժամանակներում նաև վալցիումի ցիանամիդի և ցիանահալույթի որակի վատացումը։